ԷԴՈՒԱՐԴ ՎԱՆԻԿԻ ՊՈՂՈՍՅԱՆ. Անկախ պետականության հաստատման գործընթացը Հայաստանում (1990–2001 թթ.), *Երևան, «Լուսաբաց»հրատ., 2013, 603 էջ:*

Հայաստանի Երրորդ Հանրապետության ձևավորման և զարգացման ընթացքի գիտական լուսաբանումը դյուրին չէ այն պարզ պատճառով, որ պահանջում է գտնել նրա սկզբնավորման արտաքին ու ներքին գործոնների պատճառահետևանքային կապը, անդրադառնալ ներքաղաքական բարդ և հակասական իրավիճակին, որոնք պահանջում են հայեցակարգային կշռադատված մոտեցումներ: Եվ ահա բոլորովին վերջերս լույս տեսավ պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Էդուարդ Պողոսյանի «նկախ պետականության հաստատման գործընթացը Հայաստանում (1990–2001 թթ.)» մենագրությունը: Վստահաբար կարելի է արձանագրել՝ աշխատությունը ամենահաջող փորձերից է հայոց նորանկախ պետականության հաստատման գործընթացի լուսաբանման ճանապարհին:

Մենագրությունը գրված է գիտական հմտությամբ և տեսական պատշաճ մակարդակով: Արդյունքում ստացվել է 5 գլխից, 19 ենթագլխից, վերջաբանից և օգտագործված սկզբնաղբյուրների ու գրականության ցանկից բաղկացած ինքնատիպ մի աշխատություն:

Ստվարածավալ սույն աշխատանքը նվիրված է ԽՍՀՄ փլուզմանն անմիջականորեն նախորդած շրջանից մինչև Հայաստանի անկախության հռչակումը և քաղաքական անկախացումից հետո ընկած ժամանակաշրջանում հայ ժողովրդի ողջ բազմադարյա պատմության, թերևս, ամենավեհաշուք, հազվագյուտ էջերից մեկի, աշխարհում հայոց ազգի հետագա ընթացքի որակական մակարդակը պայմանավորող, Հայաստանում ազգային կենսական շահերով պայմանավորված ինքնիշխանության ծավալման ուղիով անկախ պետականության հաստատման բազմաբնույթ գործընթացի հնարավորինս համակարգված պատմաքննական լուսաբանմանն ու վերլուծությանը:

Էդ. Պողոսյանի մենագրությունը հայ պատմագիտության մեջ Հայաստանում՝ քննարկվող ժամանակահատվածում անկախ պետականության հաստատման գործընթացի հնարավորինս ամբողջական և համակարգված ուսումնասիրման առաջին փորձն է, երբ անկախության հաստատման ընթացքը լուսաբանվում է հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական ոլորտներում, այդ թվում՝ պետահիրավական, ազգային, հոգևոր, համաշխարհային հանրության մեջ ինտեգրվելու և երկրի ներքին ու արտաքին կյանքի կարևոր այլ բնագավառներում ծավալված գործառութային առումով սերտորեն կապված, միմյանց փոխպայմանավորող նպատակային միջոցառումների ամբողջական համակարգ: Հանրապետությունում պետական ինքնիշխանության ծավալման ընթացքում կյանքի կոչված այդ ձեռնարկումներն աշխատանքում օբյեկտիվորեն լուսաբանվել են բացառապես Հայաստանում անկախ պետականության հաստատման հետ սերտորեն փոխկապակցվածության, այդ գործում դրանցից յուրաքանչյուրի ունեցած դերակատարության առումով:

Մենագրությունն ունի արդիական հնչեղություն և հրատապություն, որը պայմանավորված է աշխատանքի ինչպես գիտական, այնպես էլ գործնական, կիրառական որոշակի նշանակությամբ:

Աշխատանքն աչքի է ընկնում իր փաստառատությամբ: Էդ. Պողոսյանը, առաջնորդվելով պատմական նյութի լուսաբանման և վերլուծության մեթոդոլոգիայով, հետազոտությունն իրականացրել է պատմության ուսումնասիրության

համակողմանիության կարևորագույն սկզբունքով, որը մերժում է հատուկենտ, շատ հաճախ ոչ համոզիչ փաստերի, մի կերպ կորզված եզակի օրինակների վրա հիմնված և այդ իսկ պատճառով որպես կանոն՝ իրողությունից հեռու դրույթների առաջադրումը:

Օգտագործելով մեծ քանակությամբ սկզբնաղբյուրային նշանակության նյութեր՝ արխիվային նորահայտ փաստաթղթեր, տպագիր աղբյուրներ, փաստաթղթերի ժողովածուներ, բազմաթիվ տեղեկագրեր, զեկույցներ, վիճակագրական տարաբնույթ հրատարակություններ, մամուլի հրապարակումներ, թեմային վերաբերող գիտական գրականություն, հեղինակը համակարգված ձևով ներկայացրել է Հայոց անկախ պետականության հաստատման ողջ գործընթացի կարևորագույն հիմնախնդիրները:

Հետազոտության հիմնական անվիճելի գիտական նորույթը Հայաստանում, խնդրո առարկա ժամանակահատվածում, անկախ պետականության հաստատման գործընթացի՝ որպես հասարակական կյանքի ամենատարբեր ոլորտներում իրականացվող ձեռնարկումների ամբողջական համակարգի ուսումնասիրությունն ու վերլուծությունն է:

Հեղինակին հաջողվել է հետազոտության հիմնախնդրային սկզբունքի խստիվ պահպանմամբ աշխատության մեջ առանձնացնել և համակարգել գլխավոր հարցերը՝ ստեղծելով կայացած և իրենից անվիճելի նորույթ ներկայացնող աշխատանք:

Հիմնավորված է այն տեսակետը, որ Հայաստանի անկախացման գործընթացի ղեկին հայտնված քաղաքական ուժերը ստիպված էին ընթացքում և՛ սովորել, և՛ միաժամանակ հանրապետության համար ներքին ու արտաքին դժվարին պայմաններում կիրառել շատ դեպքերում միայն թերացումների դառը փորձով ձեռք բերված հմտությունները:

Մենագրության մեջ հեղինակը եկել է այն եզրահանգման, որ ինչպես ողջ հայ հասարակությունը, այնպես էլ նրան փաստացիորեն ղեկավարող քաղաքական ուժերը անկախության հաստատման գործընթացում, այնուամենայնիվ, կարողացան հաջողությամբ դիմագրավել այդ շրջանի հիմնական մարտահրավերներին: Հայաստանի անկախացումը՝ հատկապես քաղաքական անկախության հռչակմանը նախորդած ժամանակահատվածում, ընթացավ որպես էվոլյուցիոն գործընթաց, երբ Խորհրդային Միության աստիճանական փլուզմանը համընթաց հասարակական կյանքի տարբեր ոլորտներում մեծանում էր հանրապետության ինքնիշխանությունը:

Շատ կարևոր է, որ աշխատանքում լուսաբանված են անկախացող Հայաստանի նկատմամբ Մոսկվայի որդեգրած կոշտ ու անբարյացակամ վերաբերմունքի պայմաններում հայկական կողմի ընտրած զգուշավոր գործելակերպի առանձնահատկությունները:

Հանգամանորեն և կոնկրետ փաստերով ներկայացված է Հայաստանի տնտեսական հզորությունների փլուզման ընթացքը: Հատկապես լուսաբանվել և վերլուծվել են երկրի համար վճռորոշ նշանակության տնտեսության ճյուղերի և տնտեսական միավորների գործունեության դադարեցման քաղաքական դրդապատճառները:

Հեղինակը ներկայացրել և հանգամանորեն վերլուծել է Հայաստանում քաղաքական անկախության և տնտեսության ազատականացման միջև եղած կապը, երբ քաղաքական անկախացմամբ հանրապետությունում կյանքի կոչված շուկայական տնտեսակարգն ավելի ամրապնդեց սաղմնավորվող պետականության ինքնիշխանությունը:

Աշխատանքի արժանիքներից է նաև այն, որ հեղինակն առաջին անգամ հանգամանալից և ամբողջական տեսքով է ներկայացրել Ադրբեջանի կողմից իրականացված շրջափակումը, Հայաստան մուտք գործող երկաթուղու և էներգատարների նկատմամբ իրականացված ահաբեկչությունները, որոնք էապես կաշկանդում էին անկախության հաստատման ուղղությամբ Հայաստանի ընթացքը:

Հետազոտության մեջ անկախ պետականության հաստատման հարթության վրա, որպես ամբողջական գործընթացի անհրաժեշտ բաղադրատարրեր, պատմաքննական վերլուծության են ենթարկվել նորանկախ Հայաստանի հասարակական-քաղաքական համակարգի ձևավորման գործընթացը, որի ենթատեքստում լուսաբանվել են պետական ու վարչահիրավական բնույթի առավել էական ձեռնարկումները և ներկայացվել են այդ քայլերի ինչպես ձեռքբերումները, այնպես էլ թերացումներն ու սխալները:

Աշխատանքում առաջին անգամ որպես անկախ պետականության հաստատման բազմաբնույթ փոխկապակցված գործընթացի կարևոր բնագավառներ, քննարկվել ու վերլուծվել են արտաքին թատերաբեմում Հայաստանի ինքնիշխանությանն ուղղված մի ամբողջ խումբ ձեռնարկումներ:

Մենագրության մեջ նորանկախ ազգային պետության կողմից հայ ժողովրդի կենսական շահերի պաշտպանությունը միանգամայն հիմնավորված ներկայացվում է որպես ՀՀ ինքնիշխանության կարևորագույն դրսևորում և անկախ պետականության հաստատման ողջ ընթացքի անգնահատելի ձեռքբերում:

Հետազոտության մեջ, ըստ էության, առավել ամբողջականորեն ներկայացվել է խնդրո առարկա ժամանակահատվածում պետականորեն դեպի իր պատմական ակունքները հայ ժողովրդի վերադարձի իրողությունը: Հասարակական կյանքում անկախ պետականության ջանքերով աննախադեպ ծավալներ ընդունած ազգային հիմնարար արժեքների վերիմաստավորման և սերմանման ընթացքն ուսումնասիրության մեջ հիմնավորված կերպով ներկայացված է որպես երկրում անկախ ազգային պետականության հաստատման գործընթացի անկապտելի մաս ու նրա հատկանշական դրսևորումներից մեկը:

Մենագրությունը շարադրված է գիտական պատշաճ մակարդակով, հագեցած է ընդհանրացումներով ու եզրահանգումներով, իսկ մեկ տասնյակի հասնող ամփոփում-եզրահանգումներ պարունակող եզրակացությունների բաժինը մի առանձնակի գիտական որակ է հաղորդում աշխատանքին:

Էդ. Պողոսյանի «Անկախ պետականության հաստատման գործընթացը Հայաստանում (1990–2001 թթ.)» մենագրությունը լուրջ ներդրում է Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմության ուսումնասիրման գործում:

ԳԵՎՈՐԳ ՍՏԵՓԱՆՅԱՆ